

16483

Հ. Արքէ
Միայն կույզ
բաշխութեցնոյնութեց
1919թ.

891.99.

Ահ-15



-6 NOV 2011

891.99

-12- 15 wyp.

13 MAY 2005

ԱՐՈՎ ՄԻԱՅՆ ԿԻ ՆԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՑԻՒՆՆԵՐ



Գրւած
918-919-ին
Տպւած 919-ին
Թիելիս.

Հրատակութիւնը լինդիանուր չայ Աշտկերտական Միութեան-

ԲԵ .01. 2013

16783



ԱՐԲԵՑՈՒՄՆԵՐ:

Արիւններս յուզող աղջկան
Մէխակի վնջի մէջ երկու խօսք.
Առ: Զկան:

ԹԻՌԱՊՐՈՒԽՄ.

ՀԵՆց որ մատներս մերձենան
քո ելեսին,
եւ ով կիշխի իմ արբեցմանն
ու իմ „Ես“—ին.
Նեարդերիս մէջ հարիւրմոմեան
էլեկտրական
Լոյսասփռում կներսուզւի.
Արիւնս ալ—նարնջաբոյր
Նւաղումով կնւազի.
Աչըերիս դէմ՝ նըբատոներ:

Հենց որ շուրթերս մերձենան
 քո շուրթերին,
 Հենց որ շուրթերս արբենան
 քո շուրթերից
 Քո հեշտասոյզ շուրթերի հետ
 կներսուզեմ
 Նեարդահալիչ արևինեղուկ.
 Ու կլուծւեն ծւեն—ծւեն
 Զգայարաններն իմ հեղինեղուկ.
 Ինձ կընդգրկեն ջերմին տոներ

Հենց նոր ես լողացել.
 Մեկնել ես լուսաւոր մահճիդ.
 Զեերը լուացած մարմնիդ
 Ռոյում ես հաճոյքով վճիտ:

 Դու հենց որ ինձ տեսար
 Աչերդ արևկառ գոհար.
 Կարծես թէ իրար նոր տեսանք—
 Ուզում ենք ճանաչել իրար:

 Աչերդ պարզորոշ
 Մատնում են քո մաքուր հոգին.
 Ուզում ես համբուրեմ ես քեզ...
 Ուզում ես արբենամմ... օ, կին:

Ոտերդ նոնեղէն

Մեկնել ես միս—լեշակ չուլքով.
Մնում ես՝ մօտենամ, գրկեմ,
Լուծւեմ քո նեարդհալիչ բոյրով։

Բայց չէ... յիշիր... երեկ։
Անշափ եմ քեզ սիրում գիտեմ.
Ուզում եմ անհամբոյր թողնեմ,
Որ շուրջը քիչ տանջանք հինես։

Այսօր ես բիւրպատիկ
Ուժեղ եմ համակւում քեզմով.
Այսպէս՝ որ տանջանքից ցաւել...
Տանջել եմ աշխատում քեզ... Օ՛...

ԱՄԱՆ.

Աչքե՞րս են մշուշել արդեօք,
Թէ շնո՞ւն է խտացել կաֆէն.
Անկարդ են սեղաններն այսօր—
Ուզում եմ, որ մի բան թափեն։

Գլխիս մէջ մի գոլգոշ աղմուկ—
Կոտրում են ինչ որ տեղ բաժակ։
Երկնել ես աթոռում բամբուկ,
Հալչում ես, իմ աղջիկ, խաժակ...

Հայեացքս զըտնքել, արդէն
Ցնդո՞ւմ է. չճշմամ արդեօք.
Ուզում եմ բաժակներ ջարդեն,
Գրկեն ինձ գալարքներ ու շոգ։

Նման է ժամանակը քեզ.
Նման է. քեզ նման նւազ
Դու դու ես ու նոյնպէս ես՝ ես.
Օրերը պտոյտի մի խաղ:

R Գրգիոդ եռացրած կաթի.
Հուզիչ են շարժումներդ շոգ.
Կանեմ՝ ինչ շուրթերիցդ կաթի—
Ուժեղ չէ ինձնից ոչ ոք:

Ուզնում ես փշրտեմ շուշա...
(Օ.. ձայնը...) համբուրեմ, խածեմ,
Ուզնում ես շշնջամ. „Դուշա“—
Շապիկս խելայեղ բացեմ:

* * *

Ես յիշում եմ գիշերները լուսնկայ,
Համբոյրներդ լոյսերի դողում,
Քո շուրթերը հեշտասոյզ ու հեղնկայ,
Ատամներդ շուրթերիդ լողում:

Ես յիշում եմ հպումները շունչերնուս,
Հնչիւնները խօսքերիս նւազ.
Երկարում են արիւնները շուրթերիս՝
Ինձ թւում է՝ թէ դու մօտս ես, կաս:

Արիւնիս մէջ ծաւալւում է նւազում,
Տարածւում են իմ թևերը թոյլ—
Մատներիս մէջ—թևերիս մէջ ընդհպում,
Համբուրում եմ հմայքիդ մի հոյլ:



ՇՈՅ.

Պաղպաղակի նման սահուն
 Քո աչերի լողում—
 Թարթիչներիդ թեթև
 Ցնցումների ետև—
 Պաղպաղակի նման սահուն
 Քո աչերի լողում
 Մեղրալուսէ սահանք կանցնի
 Ինձ շոյելու ժամին:

ԱՂՕԹՔ.

Ես միայն մի աղօթք գիտեմ:
 Մի աղօթք միայն...
 Հեշտաղերս մի աղօթք գիտեմ:
 Դմ աղօթքը բոյրեր ունի:
 Բոյրերիդ նման
 Ծաւալում ու բոյրեր ունի:
 Աղօթքիս խօսքերից գիտեմ:
 Միայն դու գիտես...
 Աղօթքիս խօսքերից գիտեմ:
 Համբոյրիս լուսաւոր ըռպէն
 Միայն դու գիտես...
 Համբոյրիս լուսաւոր ըռպէն:

* * *

Դու, որ երբեմն գողունի
Հպում ես ձեռքդ ձեռքնըիս—
Կածում ես ինքս չգիտեմ,
Որ սիրտ բոյր ու դող ունի:

Մի նոր աղջիկ ես լուսավէս:
Հագիդ լեշակը նրբաթել:
Ուզում եմ սիրտ շղթայել՝
Ափսոս, որ վերջը կցաւես:

Մի նոր աղջիկ ես հեղաչւի:
Աչերդ բիլ են կարապի:
Ափսոս, իմ սիրտը կխաղայ
Քո սէրը զնոր կտառապի:

ՆԿՐՏՈՒՄ:

Շուրթերս թունոտ են, թունոտ.
Դուխի եմ օծել.
Թուում է թէ ձեր
Շուրթերը հեռու են ու մօտ:

Դուխին մի ցնորք է հիւսել
Իմ շուրջը անձե.
Հմպհում եմ ես ձեր
Շուրթերը բույրեղ ու լուսէ:

ԷՔՍՑԵՍՈՒՀԻՅԻ.
(Ի. ԱԿԵՐԵԱՆԻՆԻՑ)

Դու եկար շոկոլադ գլխարկով,
Բարձրացրիր քո վուալը ոսկէ,
Պարկետին շուրջ յածող հաեացքով՝
Բուադ ցած դրեցիր ոռեալին:

 Քեզ լուծեց բազկաթոռը դեղին:
Քո կը ունը պարկետը ծեծեց:
„Իսկ եթէ...“—քո շշունջն անտեղի...
Ու երեսդ սուզւեց փնջի մէջ:

Սենեակում կողովով ալպեան վարդը
Տնքաց—իր տնքոցը ոլոր...
Եւ կուզին չտեսա կուզինում,
Բայց հազիւ թէ լինեմ մեղաւոր:

Նայեցիր նուրբ—գինով հայացքով.
Քո բիբով սիրտս սուր ճմլեցիր.
Նետիտ ծայրը լեզւով սրելով՝
Դիոնիս, սիրտս սուր խոցեցիր:

 Սիգարէ ծխելով հիւսեցի
Օրօրուն ու սիպտակ մի լեչակ.
Օ, սուզւել քո ահեղ ջրւէժում
Ու հնձել քո լուլիսը հասուն:

三

四

五

六

七

八

九

十

十一

十二

十三

十四

Լցւում են մէջս — փրփրում իմ մէջ
 Ծովոյս ծիրեր ու ծիծածալքեր,
 Ճայթուն ծափեր ու երահ կիներ,
 Զիստի գալար ու քըքիջ ու միս,
 Շուրթիս արիւնն ու ջերմաբոյրեր,
 Սրտիս գալարը կրակոտ....
 Քշիր կառքերը կառապան:
 Քշէր կառքերը, քշէր արագ.
 Քշէր ձիերը խելագար...
 Քշէր կառքերը արագ, արագ,
 Կռուակ, կռուակ, կռուակ, կռուակ, կռուակ...
 Անմիտ աղջիկ ես — անմիտ աղջիկ.
 Անզուսալ գալարքս, մտքիս պատրանքը
 Աւելի մեծ են, քան սէրդ մեղկ:

* * *

Հնվը կոնքիդ կոկիկ կողքի վրայ՝
 Քո ոտքերի ճեղքուածքի մէջ է սուրսրում
 Ու մետաքսէ կարճ շրջազգեստգերկճեղքում:

Ազգի առաջ անցաւ՝ երկրորդը յետ մնաց
 Ու մի վայրկեան չանցած՝ հազար բեկում
 ու ձև—

Լոյսի հաղար շողերը շրջազգեստիդ վրայ:

Ոտքդ թեթև է — էֆիրէ ոտքի նման:
 Բարձրկրունկ կոշիկդ մայդիշի զգա. *Վայ/Տօ*
 Սմ-ցմ. սմ-ցմ. սմ-ցմ. սմ-ցմ.
 Ու ամեն օր 11-ին գրասենեակիս մօտից
 անցնում...

Ոտքդ նրբած հեշտանք—ամեն խօսքից կարող:
Զբաղւել չեմ կարող, թէ որ մի օր չանցնեն
Ոտքերդ հեշտաձոյլ...

Դեղձան-լաշակ չուլքով
Իրար կյաջորդեն. սմ-ցմ. սմ-ցմ. սմ-ցմ.
Վարդամիսի՞ բոյրեր:

* * *

Մի սիպտակ աղջիկ փութկոտ շարժումով
Բարձրացաւ տրամւայ.

Սիպտակ շորերում, երկար յօնքերով,
Դէմքով պաղպաղակ, մի անուժ աղջիկ
Նստել է իմ գէմ—նստել է տրամւայ:

Համեստ. յոյսի պէս մի անուժ աղջիկ
Նստել է իմ գէմ—ձեռքը ձեռքի մէջ—
Աչքերն ապակէ լիճապակիներ:

Գարնան օրի պէս թաւիշ մի ժպիտ
Կրծքին աղջկայ. կուրծքը կմյ. չկմ.
Չկմ. կծնւի. կծնւի. չկա. չկա. կծնւի.
կծնւի. չկա շուրջը աղջկա:

Շուրջը շուրջերին երկու տիսուր գիծ.
 Մի խոնաւ երահ՝ զոյգ սև սաթին կից.
 Շութը ինչ որ բան ուզեց մրժնջաւ
 —ի՞նչ ես մտածում, թրթռաց կամաց:
 Իմ կողքին նստած՝ անձայն կարկամած՝
 Մի ջահել տղայ խիտ յօնքերի հետ
 իսպանմ է ձեռքով:

* *

Փողոց:
 Անլուսութիւն:
 Երկինքը թուխալ ու մութ:
 Շտապը քայլերիս դանդաղ էր —
 Քայլ առ քայլ...
 Այդ ի՞նչ ծիծաղ էր լոյս —
 Բիլ ասւանով աղջիկ —
 Թրթիռ էր. թրքուհի՝
 Թրթուսն փարչա, ատլաս...
 Փարչա, ատլաս ու փայլ:

Հայեացքը լուսութիւն —
 Ժպիտ էր ջրերի:
 Դէմքն ի՞նչ պարող բուրում...
 Դէմքն ի՞նչ...
 Էլ ի՞նչ, էլ ի՞նչ...
 Ահ, թէ մէկ էլ տեսնեմ
 Այն ով էր, ի՞նչ էր...
 Ի՞նչ... որ ի՞նձ...
 Ժպտում էր ի՞նձ:

ԻՒՐԻՅ ԴԵԳԵՆԻՅ.

Լացակումած աչքեր մոխիրէ
 Թարթիչներիդ նրբին նետերի տակից,
 Իսկ ես պոէտ՝
 Գնում եմ ժպտերես,
 Երգեր եմ յուզում:

 Ավամերձ ալեկոծութեան գաղջ հոտն է,
 Բայց, թերեւս՝ զինւորական դպրոցի.
 Լում եմ՝
 Թմբուկ են զարկում,
 Տեսնում եմ — արեի վրայ փալում են մա-
 քրած սւիններ:

Ա՞խ, անցնել դէպի այն կանաչ ափը՝
Մատաղ ու նեղլիկ ծառուկները գրկել,
Շնչել լեռների օդը:
Դեղին Քմւոք լողալ ինչ է.
Թ՞է երգերով թռչել այնտեղ:

* * *

Ինչու է կորսէթդ բանտել
Ծիծերդ ծնծղա.
Բայիր, ով ցնծա
Իրանդ թել-թել:
Ինչու ես ծիծաղդ բանտել:

Ծիծաղ ու ծնծղա խօսքերում
Մի կապ կա սիրուն.
Ծիծաղն եմ սիրում
Ծնծղա-ծիծերում.
Ծիծեր կան ծնծղուն խօսքերում:



Իզմաւր է կորսեթդ բանտել
Ծիծաղդ ծնծղա.
Արձկիր, թող խնդան
Ծիծերդ ծնծղա.
Ինչու ես ծիծերդ բանտել:

ՎԱՅՐԿԵԱՆ.

Սիրում եմ ես մենակ շրջումը փողոցում。
Շրջում գիշերով, շրջումը անյուզում:
Լոյսերը գազային — լոյսերը մոռմովի,
Շողերը մանիշակ մայթերը կհովեն:
Կիները լաչակշր, կիները սիպ-շուշան.
Կիները բատիստէ. կիները կժապան:

ԹԻՌՈՒԹԵՐ ՈՒ ԲԵԿԱՆՔՆԵՐ:

* * *

Ուր երկինքը լոյս է սիալ կարապթեի պէս,
Ուր որ ծնվը բիլ է, բիլ քո աչքերի պէս՝
Բիլ ծովից հարաւ գաս՝ գհրշաւազ մի ափ կայ.
Հենց մի փոքր անցնում ես՝ շէկ կիտրոն ան-
տառ է.

Բաց պուրակների մէջ հին խրճիթ ռւնեմ ես:
Վարժ-մենակ որսորդ եմ. մեն-մենակ որսորդ
եմ:

Ծիլ աչքով տղջիկս, քաղաքում թողել եմ
Քեզ մենակ թողել եմ ու ելել վախել եմ.
Մեն-մենակ որսորդ եմ շէկ անտարների մէջ:
Բիլ աչքով աղջիկս, փուխը, նուրբ աղջիկս,
իմ ձկուն աղջիկս, քեզ նորից յիշել եմ
Շէկ անտառների մէջ: Շէկ անտառների մէջ

Քեզ նորից յիշել եմ. Եկ այցի խրճիթու:
 Վերադարձ չկայ ինձ. խորթ է ինձ քաղաքը.
 Շէկ կիտրոն անտառը... ծո՛վը...սիս երկինքը
 Օ՛, որքան խորհուրդ կայ շուրջո՞ւ մեծու-
 թեան մէջ:
 Վերադարձ չկայ ինձ. խեղճ եմ—զղացել եմ.
 Բիլ աչքով աղջիկս, որսորդիս այցի եկ
 Իր հսկա անտառը, իր անշուք խրճիթը,
 Ուր կիտրոնն իջնում է գոներիս առաջ.

* * *

Լանտիկ պարկած՝ լանտիկ աղջիկ,
 Լանտիկի մէջ ձեռքիդ ինձոր:
 Իմ լաշակը, իմ նոր աղջիկ,
 Պուրակի մէջ ձերքիդ ինձոր:
 Գիրքդ ընկած կանաչ խոտին՝
 Գիրկդ ընկած սաղարթ-սեղում,
 Ոտդ նոնէ՝ քո միւս ոտին՝
 Խնձորի մէջ շուրթ ես սուզում:

Լատիկիդ մէջ շուրթերդ տուր.
 Հէյ սուզաշուրթ, հովեկ աղջիկ,
 Իմ մէջ լուծիր բոյրերդ հուր:
 Աւելի մէծ հաճոյք - ախ չիք:

* * *

Քո յօնքերը ծիծեռնակի թևէ նման։
Քո շուրթերը երկու նշի ձեի նման։
Մի շարժիր, հեյ տիկին, հոգիս կառնիս
սելի վրան։

Ամուսինդ մոայլ ու մութ դեի նման։
Մոլորւել եմ—ոլոր կգամ խեի նման։
Բեր գինի, տիկին, տուր գինիդ ելնեմ սիրո
թելի վրան։

* * *

Օ՛, նախանձում եմ ես անքոյթ...
(Զգւանքս ձեզ.) անքոյթ կեանքնուդ համար։
Զեր միտքը ձեր հոգուն երկաթէ կապ կապել՝
Ծածկել է ձեր աչքից խենթքերը առասպել։

Իմ յոյզերին չկան, չկան սկիզբ սահման
Ու իմ յոյզերն անմիտք ձեզ խենթ պիտի
թւան։

Ես մի ցնորխնդիր, ես խենթքերի հերոս—
Խենթքի վայրկեան դարձէք ժամերօրեր
դուք գոս։

Ուզում եմ ում և է խայթիչ մի խօսք ասեմ։
Մէկին ապտակ զարկեմ, մէկին գրկեմ ամուլ։
Ահա պատկերդ հեշտ—կնոջ մարմինդ խենթ։
Պիսոս, կնոջ „պարկեշտ“ ծածկոց ունես
վրէդ։

* * *

Որքան հեշտայոյզ կար իր սև վուալի մէջ.
 Իր սև վուալի մէջ որքան հեշտայոյզ:
 Հոսում էր փողոցը լոյսի ու բալի մէջ.
 Լոյսի ու բալի մէջ կանգնել էր հանդիսաւ:

 Հայեացը խոնաւ էր. այնպէս էր թւում ինձ,
 Այնպէս էր թւում, թէ ուզում էր ճշա՝
 —Ես քեզ զեռ սիրում եմ: Թօէ. —Դու ձան-
 ձրացրիր ինձ:
 Ուզում էր խղճամ, թէ ուզում էր խղճա:

 Ու երբ ուզեցի... նա մայթիցը անցել էր.
 Մայթիցը անցել էր. համնել չուզեցի:
 —Իմ կեանքն արդէն. ծեր էր. իմ կեանքը
 դարձել էր՝
 Իմ կեանքը դարձել էր անպէտը մի խեցի:

* * *

Ծոյլ եմ ես, թոյլ եմ ես, փայլ ու փրփուր
 եմ ես.
 Բաց մէխակ փունչ ունեմ, առ նւիլում
 եմ քեզ

 Թնյլ տուր մօտիկ նստեմ. թույլ տուր ար-
 բեմ քեղմով.
 Թնյլ տուր մեղմիւ շոյեմ քո շրջազգեստը
 մով.
 Տուր քո հովհարը՝ բացեմ, հովհարեմ զզոյշ,
 Շուրջդ բոյրի պէս ցնդեմ, ծաւալւեմ զզոյշ—
 Շուրջդ բոյրի պէս շոյեմ, բոյրանամ զդոյշ:



* * *

Մեկնել ես ժպիտում մաքուր.
Փարում ես, բուրում—
Քո ձայնը, քո գոյնը բուրում,
Բուրում են, վարում:

Ուզում եմ համբոյրդ միխակ:
Ուզում եմ գրկանք:
Եկ շուրջս հիու բոյրդ տեղա.
Ասա. „Մենք չկանք“:

ՀԵՔԵԱԹ

կին, քո գինին...

Գիշերները քո շուրթերը հալած բրոնզ—
բրոնզէ տապ.
Բրոնզէ տապ են, բրոնզ, եռ՝ կաթ են
բրոնզէ կաթ:

Քո շուրթերը գիշերները տուր խմեմ.

Գիշերները քո շուրթերը բրոնզէ տապ,—
բրոնզէ տապ են,

Բրոնզէ կաթ են,
բրոնզ հեքեաթ...

* * *

Ե'կ, անտառը եկ. ես մենակ շրջիկ եմ հոն:
Ե'կ, գիշերը եկ. ես մթաշըջիկ եմ հոն:
Բեր, շուրթերդ բեր. բո շուրթերը կաթ են,
բընդ:
Բեր, գիշերը բեր բո շուրթերը կաթնէ
բընդ:
Լից, շուրթերդ լից իմ լարուն շուրթերը
թիո:
Լից, գինին բո լից. բո գինին ընտիր, ընտիր:
Դարձ, պտոյտ ու դարձ. պարդ խենթ է
մութը հոծ:
Դարձ, զգոյշ քիչ դարձ. տես բները մթաօձ:

* * *

Գունատւել ես մոմի պէս.
Գունատւել ես ու հալուսմ ես մոմի պէս.
Աչբոլորդ լեղակել է մի խոնաւ լազուրշաղ.
Մերկացել է լիմոնէ այտերիդ արներակը
մանիշակ
Ու շուրթերդ....
Կմեռնես, կմեռնես:
Կիտրոն աղջիկ - կիտրոնի պէս թթւանուշ,
Այսօր՝ վաղը կմեռնես.

Ես զիտեմ, որ իմ ~~առանոյցն~~^{առ} է քեզ հալել.
 Ես զիտեմ, որ իմ սառոյցն է քեզ հալել.
 Ես ուզում եմ՝ չմեռնես, չմեռնես...
 Ես ուզում եմ գինիներդ կինովար,
 Գինիներդ կինովար,
 Որ հատնում են. ես ուզում եմ...
 Գինիներդ գիշերի մէջ լուսատու.
 Գինիներդ կինովար:
 Գինիներդ կինովար...
 Բրոնզէ տապա:



ՆԱԶԱԾՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ.

Երես	տող.	գրւածէ.	պէտք է լինի.
8	8	ծւեն—ծւեն	ծւեն-ծւեն
12	2	միս—լեշակ	միս-լեշակ
13	11	բաժակներ	բաժակներ
14	2	նւաղ	նւաղ.
20	10	բիլ են	բիլ են՝
23	1	նուրբ—գինով	նուրբ-գինով
31	9	մայրը	մայթը
34	3	շութը	շուրթը
37	7	թերեսն	թերեսն՝
43	1	թիորեր	թիոեր
52	12	հովի ...	հովը...

Մեզնից անկախ պատճառներով մի շարք բարերից
 յետո բառավերջում չ'հնչւող „յ“ն տպագրւելէ:

Գրադարան Բնուանուր Հայ Աշակերտական
Միութեան

№ 1. Աբով: Միայն կինը:

«Ազգային գրադարան



NL0371676

